

ՏԻՄ-երի պարտադիր լիազորություններ /ֆինանսական բնագավառ/

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերջման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
<p>1. Օրենքով սահմանված կարգով համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի ավագանուն ներկայացված լինելու առկայություն:</p>		Թերի է պահպանված		<p>Նորընտիր համայնքի ղեկավարը իր լիազորությունները ստանձնել է 2012թ. նոյեմբերի 21-ին և քառամյա ծրագիրը ավագանու կողմից հաստատվել է ուշացումով՝ 2013թ. մարտի 7-ին: Խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք հոդված 53-ի պահանջը, համաձայն որի եթե համայնքի նորընտիր ղեկավարի լիազորություններ ստանձնելու ժամկետը համընկնում է նորընտիր ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետին, ապա համայնքի նորընտիր ղեկավարը քառամյա ծրագիրը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում կամ ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետում կամ իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում:</p>	<p>Առաջարկվել է քառամյա ծրագիրը ներկայացնել ավագանու հաստատմանը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 53-ում սահմանված ժամկետներում</p>	<p>Նշված խախտումը ուղղել հնարավոր չէ, սակայն հետագայում պետք է բացառել:</p>
<p>2. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված . համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային</p>	<p>Պահպանված է, ավագանու որոշմամբ ստեղծված է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի</p>					

<p>կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի առկայություն:</p>						
<p>3. Օրենքով սահմանված կարգով՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն:</p>	<p>Խորհրդակցական մարմնի նիստի 25.11.2013թ թիվ 1 արձանագրության համաձայն քննարկվել է համայնքի զարգացման քառամյա ծրագրի և 2014թ. տարեկան բյուջեի նախագծերը</p>					
<p>4. Օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի նախագծի կազմման, համայնքի ավագանու հաստատման, բյուջեի կատարման, դրանում առաջարկվող փոփոխությունների ինչպես նաև համայնքի ավագանուն եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ</p>		<p>Թերի է պահպանված</p>		<p>Համայնքի բյուջեն, բյուջեի փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները ներկայացվել է ավագանու հաստատմանը, սակայն բյուջեի կատարման եռամսյակային հաղորդումները չեն ներկայացվել ավագանու քննարկմանը: Խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ի 1-ին կետի և հոդված 69-ի առաջին մասի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 35-ի կետ 1-ի պահանջները, համաձայն որի համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ՝ մինչև</p>	<p>Օրենքով սահմանված կարգով մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը բյուջեի կատարման ընթացքի մասին ներկայացնել հաղորդումներ համայնքի</p>	<p>Յուրաքանչյուր եռամսյակին նախորդող ամսվա 15-ը բյուջեի կատարման հաղորդումները ներակայացնել ավագանուն</p>

կատարված աշխատանքների առկայություն:				հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:	ավագանուն	
5. ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում համայնքի բյուջեի նախագիծը առնվազն մեկ շաբաթ առաջ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ կատարված աշխատանքների առկայություն:	Պահպանված է					
6. Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների հրականացման համար օրենքով սահմանված կարգով վճարների սահմանման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:	Պահպանված է					
7. ՀՀ պետական բյուջեի հիման վրա ճշտված դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական	Պահպանված է					

<p>պլանների հաստատված լինելու առկայություն:</p>						
<p>8. Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին:</p>		<p>Թերի է պահպանված</p>		<p>1. Չի պահպանվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի պահանջը, համաձայն որի հաշվապահական հաշվառումը վարվում է կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան: Բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները պետք է ժամանակին գրանցվեն հաշվապահական հաշվառման հաշիվներում: 2. Դրամարկղի գիրքը լրացվում է ուշացումներով(ստուգման պահին փետրվար ամսվա մուտքերը և ելքերը գրքում չէին գրանցված), կամ խախտվել է ՀՀ կառավարության 2003թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1408-Ն որոշմամբ հաստատված «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգի» կետ 18-ի պահանջը:</p>	<p>Հաշվապահական հաշվառումը վերել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան , հաշվային պլանի համաձայն կատարված գործարքներին տալ համապատասխան ձևակերպումներ: Դրամարկղի գիրքը վարել օրենքով սահմանված կարգով:</p>	<p>20-օրյա ժամկետում</p>
<p>9. Օրենքով սահմանված ժամկետում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայությունը:</p>	<p>Պահպանված է</p>					
<p>10. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ավագանու հաստատմանը ներկայացնելու առկայություն:</p>		<p>Թերի է կատարված</p>		<p>1. Համայնքում առկա է թանկարժեք մետաղների առևտրով զբաղվող երեք տնտեսվարողներ, որոնցից 2013թ. չեն նախատեսվել և չեն գանձվել տեղական տուրք, կամ համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 150.0 հազ. դրամ: 2014թ. համար թանկարժեք մետաղների առևտրով զբաղվելու թույլտվության համար նախատեսվել է տեղական տուրք՝ տարեկան 50.0 հազ. դրամ, սակայն գանձումներ չեն կատարվել: 2. 2013թ.-ից համաձայն օրենքում կատարված փոփոխությունների ավելացել է տեղական տուրքի երկու նոր տեսակ՝</p>	<p>Տեղական տուրքերը սահմանել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և ապահովել գանձումները:</p>	<p>20-օրյա ժամկետում</p>

				<p>ա/ Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը</p> <p>բ/Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք:</p> <p>2013թ. համար վերը նշված երկու կետերով տուրքեր չեն նախատեսված, իսկ 2014թ. համար բ/ կետով տուրք նախատեսված է, իսկ ա/ կետի համար չի սահմանված (համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրք):</p>		
<p>11. Համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման ու վերահսկման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:.</p>		Թերի է կատարված		<p>1.Բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով կուտակվել է հողի հարկի, գույքահարկի և բնակչությունից գանձվող աղբահանության վճարների գծով խոշոր չափերի ապառքներ:</p> <p>2.Տաքսի ծառայության թույլտվության համար նախատեսված է 10000 դրամ տեղական տուրք, սակայն գանձումներ չեն կատարվել, այն դեպքում երբ քաղաքում գործում են մի շարք տաքսի ծառայության գրասենյակներ, ինչպես նաև անհատ տաքսիներ:</p> <p>3.Խանութներում և կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար նախատեսված է տեղական տուրք 30.0 հազ. դրամ, սակայն գումարներ գանձվել է միայն տարեվերջին, կամ 2013թ.-ին նախատեսվածից պակաս է գանձվել 202.5հազ.դրամ տուրքի գումար (9 տնտեսվարողից պետք է գանձեր 270.0 հազ. դրամ գանձվել է 67.5 հազ. դրամ):</p>	Ապահովել սեփական եկամուտների կատարումը, խոշոր ապառք ունեցողների հետ կնքել մարման ժամանակացույցեր, նախատեսել օրենքով սահմանված տուրքերը և ապահովել գանձումները:	20-օրյա ժամկետում
<p>12. Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառման առկայություն:</p>		Թերի է կատարված		<p>1.Ապառքների գանձման վերաբերյալ մարման ժամանակացույցեր չեն կազմվել, դատարանի միջոցով գանձումներ չեն իրականացվել: Վարձավճարների ուշացման դեպքերում պայմանագրով նախատեսված տուգանքներ չեն հաշվարկվել և գանձվել:</p> <p>Համայնքում ցածր է բնակչությունից</p>	Ապահովել սեփական եկամուտների գանձումները: Տեղական տուրքերը գանձել մինչև	20-օրյա ժամկետում

				<p>աղբահանության վճարների գանձման ցուցանիշները, որի համար չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ:</p> <p>2. Խախտվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի պահանջը, ըստ որի տեղական տուրք և (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրքը կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը՝ ելնելով սահմանված տեղական տուրքի կամ վճարի դրույքաչափերից (2014թ. մարտի 1-ի դրությամբ տեղական տուրքի գումարներ հիմնականում չեն գանձվել):</p> <p>3. Վաճառքի թույլտվություն չունեցող տնտեսվարողների մոտ չեն կատարվել ստուգումներ և չեն նշանակվել համապատասխան տուգանքներ: Խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹ կետի պահանջները:</p>	<p>գործունեության ծավալումը: Վաճառքի թույլտվություն չունեցող տնտեսվարողների մոտ օրենքով սահմանված կարգով կատարվել ստուգումներ և նշանակվել համապատասխան տուգանքներ:</p>	
13. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ ավագանու հաստատմանը ներկայացված որոշման առկայություն:	Պահպանված է					
14. Համայնքի բյուջեի միջոցների տնօրինման և նպատակային օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:		Թերի է պահպանված		<p>Ծախսերը կատարվել են ավագանու կողմից հաստատված բյուջեին համապատասխան: Կատարված ծախսերի օրինականության ընտրանքային ստուգմամբ պարզվեց, որ մի շարք դեպքերում խախտվել են ՀՀ օրենսդրության պահանջները:</p> <p>1. Խախտվել է «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների</p>		20-օրյա ժամկետում

			<p>գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգը» (« կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշում, կետ 7)՝ համաձայն որի հիմնական աշխատանքի վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու կամ, անկախ հեռավորությունից, հիմնական աշխատանքի վայրից մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքերում գործուղվող աշխատողին հատուցվում է միայն գործուղման ճանապարհածախսը: Նշված դեպքում համայնքում վճարվել է նաև 2000 դրամ օրապահիկի գումար (ավել վճարված գումարները ենթակա են վերականգնման): Խախտվել է նաև վերը նշված որոշման կետ 9-ի պահանջը՝ համաձայն որի գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ:</p> <p>2. Քաղաքապետարանի աշխատակիցներին տրվել է պարգևատրումներ քաղաքապետի որոշմամբ, սակայն մի շարք համայնքային ծառայողների (առաջատար և կրտսեր) այն պետք է տալ աշխատակազմի քարտուղարի հրամանի հիման վրա, կամ խախտվել է «ՏԻՄ» օրենքի 30-րդ հոդվածի կետ 3-ի ենթակետ 9-ի պահանջը, ըստ որի օրենքով, իրավական այլ ակտերով կամ աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում աշխատակազմի քարտուղարը նշանակում և ազատում է աշխատակազմի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:</p> <p>3. Քաղաքապետարանում և նրա ենթակայության մի շարք կազմակերպություններում 2014թ. հունվարի 1-ից հետո աշխատավարձերի և գործուղումների վճարումները կատարվում են կանխիկ եղանակով, կամ խախտվել է « կառավարության 2002թ. թիվ 48 որոշման կետ 41-ի պահանջը, համաձայն որի 2014թ.</p>	<p>1.Ապրանքանյութա կան արժեքների ծախսերը հիմնավորող փաստաթղթերը լրացնել սահմանված կազով:</p> <p>2.Գործուղման գումարները հաշվարկել սահմանված կարգին համապատասխան, վերականգնել ավել հաշվարկված գումարները:</p> <p>3. Բացառել աշխատավարձերի և գործուղման գումարների կանխիկ վճարումները:</p>	
--	--	--	--	--	--

				<p>հունվարի 1-ից նշված տնտեսագիտական հոդվածներով կանխիկ դրամով վճարումներ չեն կարող կատարվել (փոփոխությունը կատարվել է 28.11.2013թ. թիվ 1324 որոշմամբ):</p> <p>4. Գնված ապրանքանյութական արժեքների ծախսը հիմնավորող փաստաթղթերի ընտրանքային ստուգմամբ պարզվեց, որ բացակայում են 2013թ. «Տրանսպորտային նյութեր» հոդվածով գնված 6999.2 հազ. դրամ նյութերի (վառելիք, ավտոպահեստամասեր) ծախսը հիմնավորող փաստաթղթերը:</p>		
<p>15. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների համաձայն համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ապառքներից (հողի հարկի և գույքահարկի մասով) գումարների ներառում:</p>		Թերի է պահպանված է		<p>Համաձայն 2014թ. բյուջեում առկա տեղեկանքի գույքահարկից մուտքեր նախատեսված է 26819.0 հազ. դրամ, որից 2014թ. հաշվարկ՝ 23819.0 հազ.դրամ, ապառք՝ 3000.0 հազ. դրամ: Ըստ ստուգման ժամանակ ներկայացված տեղեկատվության, գույքահարկի մեկ տարվա հաշվարկը կազմում է 37317.8 հազ.դրամ, կամ մեկ տարվա հաշվարկից պակաս է նախատեսված 13498.8 հազ.դրամ (37317.8-23819.0): Համայնքի բնույթում մեկ տարվա հաշվարկից պակաս է նախատեսված նաև աղբահանության համար նախատեսված վճարները:</p>	<p>Բյուջեի կազմման ժամանակ սեփական եկամուտեր նախատեսել մեկ տարվա հաշվարկային գումարներից ավել (նախատեսել մեկ տարվա հաշվարկ և որոշակի գումար նաև ապառքներից):</p>	20-օրյա ժամկետում
<p>16. Համայնքի բյուջեի կազմման գործընթացում տարեկան հաշվարկային ցուցանիշների իրատեսական բաշխուման առկայություն՝ ըստ ամիսների:</p>	Պահպանված է					
<p>17. Բյուջեի ծախսային մասի կազմման գործընթացում՝ աշխատավարձի ֆոնդի տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ներկայացրած</p>	Պահպանված է					

առաջարկությունների ընդունում:						
18. <<Ֆինանսական համահարթեցման մասին>> << օրենքի համաձայն՝ դոտացիաների տրամադրման համար ներկայացվող ելակետային տվյալների համապատասխանության ապահովում համայնքների տարեկան հաշվարկային ցուցանիշներին (բազային թվերին) համապատասխան:	Պահպանված է					
19. Համայնքի բյուջեի եկամտային մասի կատարման գործընթացում եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշների ապահովման դեպքում՝ պատճառների բացահայտում և ձեռնարկված միջոցների իրականացում:	Պահպանված է					
20. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և << կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջների պահպանում:		Թերի է պահպանված		Մի շարք դեպքերում գնման գումարները գերազանցել են գնումների բազային միավորը, սակայն ավագանու որոշմամբ ընտրվել է գնման բանակցային ընթացակարգի տարբերակը: Հղումը կատարվել է «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքի 55-րդ հոդվածին և «Գնումների մասին» << օրենքի 20-րդ հոդվածի կետ 5-ի 2-րդ մասին, համաձայն որի բանակցային ընթացակարգով կարող է գնում կատարել նաև այն դեպքում, երբ ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել: Նշված դեպքում համայնքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները (մինչև բաց ընթացակարգով մրցույթ հայտարարելը մոտ երկու ամիս բանակցային ընթացակարգով կնքվել է 9120.0 հազ. դրամի պայմանագիր) և	Գնումներ կատարելու ժամանակ առաջնորդվել «Գնումների մասին» << օրենքի և << Կառավարության 10.02.2011թ.թիվ 168-ն որոշման պահանջներին համապատասխան	Նշված խախտումը ուղղել հնարավոր չէ, սակայն հետագայում պետք է բացառել նման կարգի խախտումները:

			<p>ամանորյա տոնակատարության կազմակերպման աշխատանքները (4065.4 հազ. դրամ) չեն կարող դիտվել որպես արտակարգ իրավիճակներից բխող գնման անհետաձգելի պահանջ:</p> <p>2013թ. նման խախտում արձանագրվել է նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների հացի գնման գործընթացում: Այն պետք է գնվեր շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի կիրարկմամբ, սակայն տարեսկզբին գնումը կատարվել է բանակցային ընթացակարգով: Առաջին դեպքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի կետ 5-ի 2-րդ մասի պահանջը, իսկ հացի գնման դեպքում խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ.-ի թիվ 168-Ն որոշման 32-րդ մասի կետ 2-ի բ/ ենթակետի պահանջը:</p>		
--	--	--	---	--	--